ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» մարտի 2023 թվականի N 214-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Արման Աբգարի Հովհաննիսյանին տալ հանգստյան գոտու կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 5/50 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Արման Աբգարի Հովհաննիսյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արման Աբգարի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» մարտի 2023 թվականի N 213-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Արման Աբգարի Հովհաննիսյանին տալ հյուրանոցային համալիրի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 5/51 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Արման Աբգարի Հովհաննիսյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արման Աբգարի Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«9» մարտի 2023 թվականի N 212-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Արմեն Երվանդի Բուդումյանին, Ռոբերտ Արմենի Մնացականյանին և Անահիտ Պետիկի Պետրոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 48 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան վերակառուցման և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

4.Շինարարության թույլտվություն կտրամադրվի աշխատանքային նախագծում ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմանների առկայության դեպքում:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Երվանդի Բուդումյանին, Ռոբերտ Արմենի Մնացականյանին և Անահիտ Պետիկի Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«9» մարտի 2023 թվականի N 211-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վալերի Վարդկեսի Կարապետյանի (ծնված՝ 1958 թվականի փետրվարի 27-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Աբովյանի շրջանի «Ջրվեժ-1» այգետարածքի թիվ 127 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին կից, ավել օգտագործվող հողամասը և ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 2022 թվականի փետրվարի 9-ին տրված թիվ Հ-1416 արխիվային տեղեկանքը, Վալերի Վարդկեսի Կարապետյանի փաստաթղթերի պատկանելիության իրավաբանական փաստը հաստատելու մասին նոտարական գրասենյակի որոշումը, վավերացված 2021 թվականի նոյեմբերի 29-ին, անհատ ձեռնարկատեր Էդվարդ Միլիտոսյանի կողմից կողմից 2023 թվականի փետրվարի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023PPJAUM, մուտքագրված 2023 թվականի փետրվարի 8-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Էդվարդ Միլիտոսյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Վալերի Վարդկեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի «Ջրվեժ-1» այգետարածքի թիվ 127 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի փաստացի մակերեսը կազմում է 695,0 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 510,0 քառ.մետրի փոխարեն, ինչպես նաև 1988-1989 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 291,57 քառ.մետր և թիվ 2 օժանդակ շենքը՝ 9,6 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Վալերի Վարդկեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի «Ջրվեժ-1» այգետարածքի թիվ 127 հասցեի՝ հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի «Ջրվեժ-1» այգետարածքի թիվ 127 հասցեի օրինական 510,0 քառ.մետր հողամասին կից 185,0 քառ.մետր հողամասի չափով ճանաչել Վալերի Վարդկեսի Կարապետյանի սեփականության իրավունքը:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 185,0 քառ.մետր ավել օգտագործվող հողամասից 102,0 քառ.մետր հողամասի նկատմամբ ճանաչել Վալերի Վարդկեսի Կարապետյանի սեփականության իրավունքն անհատույց, իսկ 83,0 քառ.մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի կարգով օտարել Վալերի Վարդկեսի Կարապետյանին՝ հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով համայնքի բյուջե վճարում կատարելուց հետո, որը կազմում է 261 794 (երկու հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Վալերի Վարդկեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի «Ջրվեժ-1» այգետարածքի թիվ 127 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 1-ին այգեգործական զանգված, 4-րդ թաղամաս, թիվ 127:

4.Վալերի Վարդկեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին այգեգործական զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 127 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 1988-1989 թվականներին ինքնակամ կառուցված թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 291,57 քառ.մետր և թիվ 2 օժանդակ շենքը՝ 9,6 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

5.Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վալերի Վարդկեսի Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» մարտի 2023 թվականի N 210-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Ռուզաննա Ավագի Թովմասյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ռուզաննա Ավագի Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 8-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 12, 16 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից բաժանված 890,99 քառ.մետր մակերեսով թիվ 1 հիմնական մասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 8-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 11, թիվ 2 բաժանվող մասին՝ 949,28 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 8-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 13, թիվ 3 բաժանվող մասին՝ 919,77 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 12, թիվ 4 բաժանվող մասին՝ 683,67 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 14 և թիվ 5 բաժանվող մասին՝ 675,68 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 8-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 16:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ քաղաքացի Ռուզաննա Ավագի Թովմասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» մարտի 2023 թվականի N 209-Ա

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետով և հաշվի առնելով քաղաքացի Ալբերտ Կարենի Վարդանյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Թույլատրել Ալբերտ Կարենի Վարդանյանին և Անի Ռուբենի Սարգսյանին՝ շարունակելու ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 46-րդ փողոցի թիվ 6 հասցեի հողամասում 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 242 շինարարության թույլտվությամբ տրված երկհարկանի բնակելի տան, շվաքարանի, լողավազանի, տնտեսական շինության և պարիսպի կառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ալբերտ Կարենի Վարդանյանին և Անի Ռուբենի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» մարտի 2023 թվականի N 208-Ա

## ԺԵՆՅԱ ՄԱՌԼԵՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի թիվ 6 տան բնակիչ Ժենյա Մառլենի Հովսեփյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է 7 անձից, ինքը և ամուսինը՝ Էդուարդ Մուսայի Տիգրանյանը չեն աշխատում, ամուսինը 3-րդ կարգի հաշմանդամության թոշակառու է, իրենց հետ են բնակվում 3 որդիները, որոնցից՝ Տիգրան Էդուարդի Տիգրանյանը՝ կնոջ և անչափահաս երեխայի հետ, Արման և Խորեն Էդուարդի Տիգրանյանները, ընդ որում՝ Արման Տիգրանյանն ունի առողջական խնդիրներ, որոնք նույնպես չեն աշխատում և ընտանիքի վիճակից ելնելով Ժենյա Մառլենի Հովսեփյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Սոնա Հովհաննիսյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Ժենյա Մառլենի Հովսեփյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ժենյա Մառլենի Հովսեփյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«3» մարտի 2023 թվականի N 207-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԹԻՎ 599-Ա, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 753-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 108-րդ կետով և հաշվի առնելով քաղաքացի Հովհաննես Արմենի Դանգյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 22-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու մասին» թիվ 559-Ա և 2021 թվականի սեպտեմբերի 27-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 753-Ա որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշումների 1-ին կետերում «մեկ հարկանի» բառերից առաջ լրացնել «նկուղային հարկով» բառերով:

2.Թույլատրել Հովհաննես Արմենի Դանգյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 25-րդ փողոցի թիվ 27 հասցեի տնամերձ հողամասում 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 183 շինարարության թույլտվությամբ տրված նկուղային հարկով մեկ հարկանի բնակելի տան և ավտոտնակի կառուցման աշխատանքները՝ համաձայն փոփոխված նախագծի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հովհաննես Արմենի Դանգյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» մարտի 2023 թվականի N 206-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Նարեկ Հունանի Հարությունյանին և Աննա Յուրիկի Թունանյանին տալ ջրագծի և կոյուղագծի կառուցման շինարարության թույլտվություն՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 30-րդ փողոցի թիվ 18 հասցեի հողակտորում ջրամատակարարումն ու ջրահեռացումն ապահովելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարեկ Հունանի Հարությունյանին և Աննա Յուրիկի Թունանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«3» մարտի 2023 թվականի N 205-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Գևորգ և Աշոտ Սերգեյի Դարբինյաններին, Ռոբերտ Շավարշի Հովակիմյանին տալ օժանդակ շինության կառուցման շինարարության թույլտվություն՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ թաղամասի թիվ 8/11 հասցեի հողամասում:

2.Կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների իրականացումը կատարվում են բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3.Պարտավորեցնել Գևորգ և Աշոտ Սերգեյի Դարբինյաններին, Ռոբերտ Շավարշի Հովակիմյանին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գևորգ և Աշոտ Սերգեյի Դարբինյաններին, Ռոբերտ Շավարշի Հովակիմյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2023 թ. մարտի 3
գ. Ջրվեժ